ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/11.1/7941-2025

«18» 09 2025թ.

**«ՄԵԴԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ» ԾՐԱԳՐԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐ,
«ՀԵՏՔԻ» ՓՈԽԽՄԲԱԳԻՐ
ԼԻԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Սայադյան,

Ի պատասխան 2025 թվականի սեպտեմբերի 12-ի Ձեր հարցման՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից հեռուստաընկերություններին և ռադիոընկերություններին մատուցվող ծառայությունների արժեքի և գնագոյացման վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (այսուհետ՝ «ՀՀՌՑ» ՓԲԸ) կողմից շահագործվող թվային հաղորդիչ ցանցի միջոցով հանրապետական սփռում իրականացնող հեռուստաընկերություններին մատուցվող ծառայությունների ամսական վճարը կազմում է 6,0մլն. դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Թվային հաղորդիչ ցանցի շահագործմամբ հեռուստաընկերություններին մատուցվող ծառայությունների գինը որոշվել է հեռարձակման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքի շահագործման ու պահպանման ծախսերով: Թվային հեռարձակման ծառայությունների արժեքի հաշվարկման հիմքում դրվել է.

- Թվային ցանցի կառուցման բոլոր ծախսերի գծով կապիտալ ներդրումների ծավալը՝ ներառյալ գործող շենքերն ու շինությունները: Տարեկան ամորտիզացիոն հատկացումները հաշվարկվել են համաձայն «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ հաստատված առանձին հիմնական միջոցների դասերի համար սահմանված ամորտիզացիոն մասհանումների դրույքաչափերի:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ davit.gasparyan@hti.am

- էլեկտրաէներգիայի ծախսը՝ հաշվարկված դրվածքային հզորությամբ հիմնական և լրացուցիչ սարքավորումների, ինչպես նաև, ընդհանուր նշանակության էլեկտրաէներգիայի ծախսով և 1կՎտ/ժամ էլեկտրաէներգիայի գործող սակագնով:

- Աշխատավարձի ծախսը՝ հաշվարկված հեռարձակման ցանցի շահագործումն իրականացնող անձնակազմի անհրաժեշտ թվաքանակով և նմանատիպ մասնագետների համար հանրապետության աշխատանքի շուկայում առկա միջին աշխատավարձի չափով:

Ընդհանուր արտադրական և վարչական ծախսերը, ըստ տեխնիկական միջոցների տեսակների, տոկոսային հարաբերությամբ բաժանված է վերը թվարկված երեք հիմնական ծախսերի վրա: Շահույթը նախատեսված է ինքնարժեքի 8%-ի չափով:

2. «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող թվային հաղորդիչ ցանցի միջոցով մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստաընկերություններին մատուցվող ծառայությունների ամսական վճարը կազմում է 1,5մլն. դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գնագոյացումը հաշվարկվել է նույն սկզբունքով:

Հարկ է նշել, որ թվային հաղորդիչ ցանցի միջոցով հանրապետական և մայրաքաղաքային սփռման համար գործող սակագները արժանահավատ են ճանաչվել նաև Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից:

3. Հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող ռադիոընկերություններին «ՀՀՌՑ» ՓԲ-ի կողմից մատուցվում է երկու տիպի ծառայություն՝ «ՀՀՌՑ» ՓԲԸ-ին պատկանող տեխնիկական միջոցներով հեռարձակման ծառայություն և «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի կայաններում տեղադրված պատվիրատուների տեխնիկական միջոցների սպասարկման ծառայություն:

Կախված ցանցի տարածվածությունից և տեխնիկական միջոցների քանակից հանրապետական սփռում իրականացնող ռադիոընկերություններին մատուցվող ծառայությունների գումարները տարբեր են և տատանվում են 490 000-7 286 000 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ-ն) շրջանակներում: Մայրաքաղաքային սփռում իրականացնող ռադիոընկերություններին «ՀՀՌՑ» ՓԲԸ-ն մատուցում է միայն տեխնիկական միջոցների սպասարկման ծառայություն: Ամսական գումարները կազմում են 200 000-250 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Ռադիոների հեռարձակման գումարները պայմանագրային են և ձևավորվել են բանակցությունների արդյունքում:

9/18/2025

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GASPARYAN DAVIT 1407810154 **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության
կապի բաժին, Մելինե Դանիելյան Հեռ՝ 010 590063

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ davit.gasparyan@hti.am